2005, ՄԱՐՏ Ա, ԹԻՎ 5 (193)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

**8 մարտի**

### Լատվիայի խորհրդարանի նախագահին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լատվիայի Սաեյմայի (Խորհրդարան) նախագահ տիկին Ինգրիդա Ուդրեին եւ նրա գլխավորած պատվիրակությանը՝ Ած Գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանի եւ երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը, ողջունելով Լատվիայի խորհրդարանի նախագահի անդրանիկ այցը Ս. Էջմիածին, շնորհավորեց եւ լավագույն բարեմաղթանքներն ուղղեց նրան՝ կանանց միջազգային օրվա առիթով եւ ուրախություն հայտնեց, որ երկու երկրների համագործակցությունն ու հարաբերությունները զարգանում են բարձր մակարդակով: Հայրապետը շեշտեց, որ երկու ժողովուրդների բարեկամությունը մշտապես առանձնահատուկ եւ ջերմ է եղել, ինչը դրսեւորվել է նաեւ արցախյան ազատագրական շարժման օրերին:

Հանդիպման ընթացքում խոսվեց Հայաստանում այս տարի նշվող Հայոց գրերի գյուտի 1600-ամյա հոբելյանի եւ Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի մասին: Վերջինի առնչությամբ Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ մայիսի 2-ին Լատվիայի Լյութերական Եկեղեցու կենտրոնական տաճարում մասնավոր արարողություն է անցկացվելու՝ ի հիշատակ այդ ողբերգության: «Հավատով եւ հուսով ենք լեցուն, որ հայոց ցեղասպանությունը կճանաչվի եւ կդատապարտվի՝ որպես մարդկության դեմ կատարված ոճրագործություն»,- ասաց Հայոց Հայրապետն իր խոսքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց Լատվիայի իշխանություններին՝ հայ ժողովրդի լատվիաբնակ զավակների նկատմամբ դրսեւորած բարյացակամ վերաբերմունքի ու հոգածության համար:

Տիկին Ուդրեն, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, անդրադարձավ երկու երկրների ու ժողովուրդների պատմական ընդհանրություններին եւ հատկապես կարեւորեց միմյանց զորակցության, փորձի փոխանակման եւ սերտ համագործակցության պարագան:

Հանդիպմանը խոսվեց նաեւ երկու երկրներում տիրող կրոնական իրավիճակի, Հայ Առաքելական եւ Լյութերական Եկեղեցիների ներկայիս առաքելության, ինչպես նաեւ եկեղեցի-պետություն հարաբերությունների մասին:

**11 մարտի**

### Սիրիայի դեսպան դոկտ. Ղասսան Ռասլանին

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունն ավարտած Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար, դեսպան դոկտ. Ղասսան Ռասլանին:

Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց դեսպանի աշխատանքը Հայաստանում եւ բերած ավանդը երկու երկրների ու ժողովուրդների միջեւ հարաբերությունների զարգացման գործում: «Մեր սիրտը գոհունակությամբ է լցվում եւ իրապես մխիթարվում այն երեւույթով, որ մեր բարեկամ երկու ժողովուրդները շարունակում են հարյուրամյակների եղբայրությունը՝ զորակից, աջակից եւ նեցուկ լինելով միմյանց: ... Մենք եղել ենք Սիրիայում եւ տեսել այն հոգատար վերաբերմունքը, որ դրսեւորվում է մեր ժողովրդի զավակաց նկատմամբ իշխանությունների կողմից, տեսել մեր ժողովրդի գոհունակ ու շնորհակալ ոգին հանդեպ Սիրիայի իշխանությունները»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում՝ իր բարեմաղթանքներն ուղղելով Սիրիայի իշխանություններին ու ժողովրդին:

Ամենայն Հայոց Հայրապետը նշեց նաեւ, որ սիրիաբնակ հայորդիները ցանկություն են հայտնել , ի նշան հայ եւ արաբ ժողովուրդների բարեկամության, հայրենի հողում կառուցելու հայ ժողովրդի երախտիքը խորհրդանշող մի հուշարձան:



Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ դոկտ. Ռասլանը վստահություն հայտնեց, որ երկու երկրների եւ ժողովուրդների միջեւ ձեւավորված հարաբերություններն առավել կսերտանան եւ կխորանան: «Այս կարճ ժամանակահատվածը, որ անցկացրեցի այստեղ, մեծ տպավորություններ թողեց այս երկրի եւ հայ ժողովրդի մասին, եւ այս հիշողությունները երկար պիտի ուղեկցեն ինձ»,- նշեց դեսպանն իր խոսքում:

Հրաժեշտից առաջ Հայոց Հայրապետը դեսպանին մաղթեց բաջառողջություն եւ նորանոր հաջողություններ հետագա առաքելության մեջ:

Հանդիպմանը ներկա էր Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ վարդապետ Նալբանդյանը:

Տես էջ 2

*Մարտ 8, 2005 թ.*

### Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



*Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով Մեր օրհնությունը եւ ջերմ շնորհավորանքներն ենք հղում բոլոր կանանց մարտի 8-ի տոնական առիթով:*

*Ի խորոց սրտի Մեր մաղթանքն է, որ այս ուրախաբեր տոնը բերկրանքով, ջերմությամբ եւ հուսավառ լավատեսությամբ լցնի բոլոր կանանց, հայ մայրերի, քույրերի ու դուստրերի սրտերը, որպեսզի հավատարիմ իրենց լուսեղամ մայրերի կերտած հայ կնոջ առաքինազարդ նկարագրին՝ շարունակեն նվիրյալ առաքելություն իրականացնել՝ ի խնդիր այսօրվա մեր հայրենական եւ ազգային-հասարակական կյանքի շինության ու զորացման:*

*Մեր սրտաբուխ աղոթքն է, որ ընտանիքներում անփոխարինելի դերակատարություն ունեցող եւ տարբեր ասպարեզներում շնորհակալ գործունեություն իրականացնող կանանց նվիրումն ու ծառայասիրությունն առավել արդյունավորվեն հայրենի սուրբ ավանդներով զավակներ կրթելու եւ արժանավոր քաղաքացիներ դաստիարակելու աստվածահաճո գործում: Թող Երկնավոր Տերն իր հանապազ խնամքի եւ օրհնության ներքո պահպանի բոլոր տիկնանց եւ օրիորդաց՝ պարգեւելով անանց երջանկություն եւ անստվեր արեւշատություն:*

*Օրհնությամբ՝*

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԽԱՉԻԿ Ա ԱՐՇԱՐՈՒՆԻ
## (971/973 - 992)

*Սկիզբը՝ թիվ 4*

Աշոտ Գ Ողորմածը մահացավ 977 թվին, եւ նրան հաջորդեց Սմբատ Բ Տիեզերակալ արքան, որն իշխեց մինչեւ 989 թվականը: Աշոտ Ողորմածն իր որդուն թողեց բարգավաճող թագավորություն եւ խաղաղ կացություն: Նրա անունը մտել է «Յայսմաւուրքի» մեջ՝ որպես հիշատակելի սուրբ: Հավանաբար նա մահացավ մարերի ամսի 13-ին, որի տակ էլ հիշատակվում է: Ուներ երեք որդի՝ Սմբատը, Գագիկը եւ Գուրգենը, որոնցից ավագը հաջորդեց հորը եւ հավանաբար օծվեց Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի կողմից: Ինչպես Աշոտ Բ-ից սկսած իր նախորդները, Սմբատ Բ-ն նույնպես կրել է շահանշահի տիտղոսը, սակայն ավելի հաճախ հիշվում է տիեզերակալ տիտղոսով՝ հայ Բագրատունիների մեջ լինելով երկրորդ նմանատիպ տիտղոսակիրը Սմբատ Ա-ից հետո: Սմբատ Բ-ն մեծ զարկ տվեց Անիի շինարարությանը եւ կառուցեց նրա երկրորդ եւ արտաքին պարիսպը, որը մի տեսակ շրջափակեց Աշոտ Գ-ի կառուցած պարիսպը: Այն, ուղիղ գծով սկսվելով Ծաղկոցաձորից, շարունակվում էր դեպի Ախուրյան գետը եւ մեծապես ամրացնում մայրաքաղաքի պաշտպանական համակարգը. իսկ քաղաքը մյուս երկու կողմերից անառիկ էր՝ շնորհիվ անդնդախոր ձորահովիտների: Պարիսպները կառուցվել էին վիմատաշ քարերով եւ կրով, ամրացվել բրգերով, որոնց մնացորդները պահպանվել են մինչեւ մեր օրերը: Պարիսպներն ունեին մի քանի դարպասներ, որոնք ունեին մայրագերան, երկաթագամ, հարահեղույս եւ բեւեռապինդ դռներ:

Աշոտ Գ-ի այրին՝ Խոսրովանույշ թագուհին, ապրելով ամուսնու մահից հետո եւս երեք տարի, ավարտեց Սանահինի եւ Հաղպատի շինությունները՝ ավելացնելով լրացուցիչ կառույցներ: Սմբատ Բ-ն լայն շինարարական գործունեություն իրականացրեց մայրաքաղաք Անիում, եւ չի բացառվում, որ մինչեւ մեր օրերը պահպանված կառույցների մի նշանակալից մասը նրա գործունեության արդյունքն է: Նա կառուցեց Անիի Կաթողիկե եկեղեցին, որի շինարարությունն ավարտվեց նրա մահից հետո՝ Կատրամիդե թագուհու կողմից, եւ որը դեռեւս կանգուն է: Դրան կից կառուցվեց կաթողիկոսարան, որովհետեւ բոլորովին հարմար չէր, որ կաթողիկոսարանը գտնվի մայրաքաղաքից դուրս: Այսուհանդերձ, Խաչիկ Ա Արշարունին այդպես էլ չկարողացավ պաշտոնապես տեղափոխվել Անի, թեպետ բացառվում է, որ նա հաճախ չհայտնվեր Անիի կաթողիկոսարանում՝ տարբեր առիթներով ու



պատճառներով: Սմբատ Բ-ի օրոք մեծ հռչակ ձեռք բերեց Տրդատ ճարտարապետը, որը կառուցեց Արգինայի Կաթողիկեն եւ կաթողիկոսարանը: 989 թվին՝ Կոստանդնուպոլսի մեծ երկրաշարժից հետո, երբ փլվեց սուրբ Սոփիայի գմբեթը, նա վերակառուցեց այն՝ տաճարը գեղեցկապես վերաշինելով:

Սմբատ Բ-ի օրոք մի պահ խաղաղությունը խաթարվեց՝ նրա եւ Կարսի թագավոր Մուշեղի միջեւ ծագած հակառակության պատճառով: Մուշեղը, լինելով ավագը Բագրատունյաց տոհմում, թերեւս կամենում էր հավակնել շահնշահի կարգավիճակին, սակայն Սմբատը, նրա վրա հարձակվելով, գրավում է Ճակատք գավառի Շատիկ բերդը: Հայտնվելով ծանր վիճակում՝ Մուշեղը դիմում է Տայքի կյուրապաղատ Դավթի օգնությանը, որի արդյունքում Անիի թագավորը ստիպված եղավ Մուշեղին վերադարձնել Շատիկը, իսկ Դավիթ կյուրապաղատը ետ վերադարձավ՝ առանց վնասելու Սմբատի տիրույթները: Մուշեղը, կամենալով ամեն կերպ վնասել Սմբատ Բ-ին, նրա դեմ է գրգռում Աբլհաճ ամիրային, որը հարձակվում է Անիի թագավորության վրա եւ ավերում Հոռոմոց վանքը՝ եկեղեցու գմբեթից ճոպանով վայր բերելով խաչը: Սակայն Աբլհաճը շուտով պարտվեց Գողթնի Աբուտլուփ ամիրայից եւ կորցնելով իր իշխանությունը՝ թափառում էր այս ու այն կողմ, մինչեւ որ հույսը հույների օգնությունից կտրելով՝ խեղդամահ արվեց Ուղթիս (ներկայումս՝ Օլթի) քաղաքում: Աբուտլուփը (իմա՛ Աբու-Դուլաֆ) հարձակվեց նաեւ Վասպուրականի վրա, որտեղ նա նենգաբար սրախողխող արեց Ճվաշռոտ գավառի Բակյար բերդի բերդակալներ Աբլղարիբ, Գրիգոր եւ Տիգրան իշխաններին, չնայած խոստացել էր հանձնվելու դեպքում կյանքները շնորհել: Բերդն այնուհետեւ ետ վերադարձվեց, սակայն Գողթնի ամիրան իր այս հարձակումների հաջող արդյունքում բավականին ուժեղացավ: Ինչ վերաբերում է Մուշեղին, ապա նա 984 թվին մահացավ, եւ նրան հաջորդեց նրա որդի Աբասը:

Հովհան Չմշկիկի մահից հետո բյուզանդական գահ բարձրացան Ռոմանոս Բ Կրտսերի երկու որդիները՝ Վասիլ Բ-ն եւ Կոստանդին Թ-ն՝ 976 թվին: Պատմության մեջ առավելապես հայտնի է Վասիլ Բ-ն, որի անչափահաս տարիքում, փաստորեն, երկիրը կառավարում էր Վասիլ ներքինին: Սա կրոնական հարցերում մոլեռանդ չէր, սակայն նրա օրոք կայսրության արեւելյան մարզերում բյուզանդական միտրոպոլիտներն ամեն կերպ աշխատում էին հայերի շրջանում տարածել քաղկեդոնականությունը: Հատկապես



չափն անցնում էին Սեբաստիայի եւ Մելիտենեի միտրոպոլիտները, որոնցից առաջինը տանջում էր հայ քահանաներին, երկաթե կապանքներով բանտ էր նետում ու չարչարում: Հալածվածների մեջ էր Սեբաստիայի երեցների ավագ Գաբրիելը, որը տարիքով առաջացած էր, իմաստությամբ լի եւ հավատի մեջ՝ քաջապինդ: Միտրոպոլիտի կարգադրությամբ արգելվեց Հայոց Եկեղեցում կոչնակ հնչեցնել, եւ հավատի մեջ թույլ որոշ հոգեւորականներ քաղկեդոնիկ դարձան: Դրանցից էին Սեբաստիո Սիոն եւ Լառիսայի Հովհաննես եպիսկոպոսները եւ ինչ-ինչ անհայտ քահանաներ: Մելիտենեի միտրոպոլիտի արածների մասին պատմությունը հիշատակներ չի պահպանել: Դրանով չգոհանալով՝ հիշյալ միտրոպոլիտները սկսեցին Խաչիկ կաթողիկոսին նամակներ գրել՝ հանդես գալով քաղկեդոնականության ջատագովության դիրքերում: Սակայն Խաչիկ կաթողիկոսը ոչ միայն չլռեց, այլեւ պատասխաններ գրեց, որով սանձեց հերձվածողներին: Նրա նամակներից մեկը՝ ուղղված Սեբաստիայի եպիսկոպոսին, ամբողջությամբ պահպանել է Ասողիկը, իսկ Մելիտենեի միտրոպոլիտին առաքվածը՝ «Գիրք թղթոց»-ը: Այլ գրությունների եւ նամակների մասին ոչինչ հայտնի չէ: Երկրորդ նամակը գրի է առնվել Սամվել Կամրջաձորեցու կողմից, որը Պողիկարպոսի մահից հետո դարձել էր վանահայր:

*Շարունակությունը՝ էջ 5*

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

# ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եղան հերձվածողներ, որոնք ասում էին, թե հող դարձած մարմինների համար հարություն չկա: Ոմանք ուրանում էին նաեւ Քրիստոսի հարությունը: Չարահնար սատանան է ուրանալ տալիս մեռելների հարությունը եւ ապա այդ նույն կարգով՝ անգոսնել տալիս Աստծո մարդանալը եւ Քրիստոսի հավատով փրկությունը: Նախ Պողոս առաքյալն է գրում, որ Քրիստոսի հարությունը պատճառն է բոլոր մարդկանց հարության, եւ նրանով հաստատվում է մեր հարությունը: Նա ասում է. «Քարոզվում է, որ Քրիստոսը հարություն է առել մեռելներից»: Այսինքն՝ նա, ով Քրիստոսին մեռելներից հարություն առած է խոստովանում, հարկ է, որ նա խոստովանի նաեւ բոլոր մեռելների հարությունը, իսկ ովքեր ուրանում են մեր հարությունը, նրանք չեն խոստովանում, որ Քրիստոսը հարություն առավ: Եվ այս երկու խնդիրն է դրված մեր առջեւ: Նախ՝ համառոտ խոսքերով հաստատել Քրիստոսի հարությունը եւ ուրացողների անիրավությունը, եւ ապա հաստատել մեր հարությունը եւ ուրացողների չարիքը:

Բայց նախ տեսնենք, թե ի՞նչ է հարությունը: Ոմանք այն սահմանում են այսպես՝ հարությունը վերստին կենդանանալն է, ոմանք էլ՝ թե հարություն է հոգու եւ մարմնի վերստին նորոգումը: Եվ այս երկու սահմանումները ինքնըստինքյան էլ պարզ են: Իսկ ոմանք էլ ասում են, թե հարություն է ընկածի վերստին հառնելը անմահ եւ հավիտենական կենդանության համար: Եվ այս սահմանումը կատարյալ է:

Այստեղ պետք է իմանալ, որ անկումը երկու կերպ է. նախ՝ հոգեւոր մահվամբ, որ մեղքն է, եւ երկրորդ՝ մարմնավոր մահվամբ: Այդ պատճառով էլ մահը երկու տեսակի է՝ հոգեւոր եւ մարմնավոր: Հոգեւոր մահվան մասին այստեղ ոչինչ չենք ասի, այլ կխոսենք մարմնավոր մահվան մասին:

Մարմնավոր հարությունը նույնպես երկու կերպ է. նախ՝ երբ մի անգամ հարություն են առնում եւ դարձյալ մեռնում, ինչպես մինչեւ Քրիստոսի հարությունը՝ Եղիան, Եղիսեն, նաեւ այն երեքը, որոնց հարություն տվեց Քրիստոսը, սակայն նրանք նորից մեռան: Այս հարությունն անկատար է: Երկրորդ՝ երբ հարություն են առնում եւ այլեւս չեն մեռնում, եւ այս հարությունը կատարյալ է: Այսպիսին էր Քրիստոսի հարությունը, ինչպես ասում է Պողոսը կորնթացիների թղթում. «Գիտենք, որ Քրիստոսը հարություն է առել մեռելներից, այսուհետեւ չի մեռնի, եւ մահն այլեւս չի տիրի նրան»: Այսպիսին է լինելու վերջին օրը բոլորի հարությունը: Որի մասին այնպես է սահմանում, թե այն ընկածի վերստին հառնումն է անմահ եւ հավիտենական կյանքի համար:



Արդ, քանի որ ծանոթացանք հարության սահմանմանը, գանք Քրիստոսի հարության մասին մեր առաջին խոսքին:

Պետք է իմանալ, որ Քրիստոսի հարությունը հաստատվում է փասը գլխավոր վկայություններով. նախ՝ մարգարեների, որոնք նախապես գուշակեցին այն, ինչպես ասում է Եսային. «Երկրի վրա վերջ տվին նրա կյանքին: Տերը կամենում է մաքրել նրան վերքերից, ցույց տալ նրան լույսը, որ հարությունն է: Դավիթ մարգարեն ասում է. «Նրա մարմինը չտեսավ ապականություն, եւ նրա հոգին չթողնվեց դժոխքում»: Երկրորդ՝ հաստատվում է օրինակներով (ինչպես Հովնանը կետի փորում երեք օր ու գիշեր կենդանի մնաց եւ երեք օր հետո դուրս ելավ այնտեղից): Որ նշանակն է Քրիստոսի մարմնի, որը մեռած էր, գերեզմանում եւ կենդանի էր եւ երեք օրից հարություն առավ: Դարձյալ՝ Մովսեսի ժամանակ վառվող մորենին, որը չէր այրվում, նույնպես նշանակն էր Քրիստոսի մարմնի, որը մեռած էր եւ կենդանի, որը ցույց են տալիս նաեւ Նրա կողից բխած ջուրն ու արյունը: Երրորդ՝ Նա Ինքը, Իր մասին վկայելով, ասում է. «Ահա պիտի ելնենք Երուսաղեմ, եւ մարդու Որդին պիտի մատնվի եւ երեք օրից հարություն պիտի առնի»: Չորրորդ՝ հրեշտակների խոսքերից, որոնք ասացին խնկաբեր կանանց. «Հիսուսի՞ն եք փնտրում՝ Նազովրեցի Խաչյալի՞ն: Այստեղ չէ՛, այլ հարություն առավ»: Հինգերորդ՝ կանանց վկայությունից, որոնք այդ մասին պատմեցին առաքյալներին, եւ նրանց խոսքերը անհիմն թվացին: Ինչո՞ւ: Որովհետեւ ոմանք ասացին, թե երկու հրեշտակներ տեսան, ոմանք՝ թե՝ մեկ հրեշտակ, ոմանք՝ մի երիտասարդի, իսկ ոմանք էլ, թե՝ շրջված վեմը տեսանք, ուրիշները, թե՝ մեր աչքի առջեւ շրջվեց վեմը. եւ այս խոսքերը սուտ էին թվում: Եվ ոչ միայն սրանով էին խոսքերն իրար հակասում, այլ նաեւ երբ կանայք դաս-դաս չորս անգամ եկան գերեզման եւ այլեւայլ տեսարանների հանդիպեցին, սակայն բոլորը միաբան հարության մասին էին ավետարանում: Վեցերորդ՝ հաստատվում է նույն զինվորների կողմից, որոնք պահպանում էին գերեզմանը, որոնք մտնելով քաղաք՝ քահանաներին պատմեցին հարության մասին: Նրանք թեեւ չէին կարող տեսնել Քրիստոսին, սակայն գերեզմանի շարժումից եւ հրեշտակների երեւումից վախեցան եւ իմացան, որ Նա հարություն է առել: Քանի դեռ վեմը կնքված էր, նրանք փութով գնացին ու պատմեցին, որպեսզի գան, տեսնեն եւ չպատժեն իրենց: Իսկ երբ քահանաները լսեցին, նրանց շատ արծաթ տվեցին, որպեսզի ասեն, թե՝ «Նրա աշակերտները եկան եւ գողացան նրան, մինչ մենք քնած էինք»: Ահա նաեւ նրանք են վկայում հարությունը, որոնց արծաթ տվեցին՝ չասելու այդ մասին: Յոթերորդ՝ հաստատվում է սուրբ մեռելների կողմից, որոնք Քրիստոսի հետ հարություն առան գերեզմաններից եւ մտան սուրբ քաղաք:

*Շարունակությունը՝ էջ 4*

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ**

# ՔԱՐՈԶ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ էջ 3*

Իսկ հարություն առած մեռելների մասին, թե նրանք դարձյալ մեռա՞ն, թե՞ ոչ, կարծիք կա վարդապետների մեջ. ոմանք ասում են, թե նրանք հարություն առան, որպեսզի վկայեն Քրիստոսի հարությունը, եւ վկայելուց հետո դարձյալ մեռան: Իսկ ոմանք էլ ասում են, թե ընդունեցին իրենց հարությունը: Ութերորդ՝ կնքված վեմից ու պատանքներից է հաստատվում. վեմից, քանի որ այն կնքված էր մատանիով, ամենեւին քաշված չէր, եւ գերեզմանի վրա ծերպ կար, որի միջով տեսնում էին մարմինը, եւ պատանքներից, քանի որ գլխի վարշամակն առանձին ծալված եւ մի կողմ էր դրված, որ ցույց էր տալիս Նրա Աստվածության ամբողջովին ծածկված եւ զատված լինելը արարածների, այսինքն՝ հրեշտակների եւ մարդկանց մտքերից: Իսկ մարմնի պատանքը՝ ոչ ամբողջովին ծալված եւ ոչ ամբողջովին պարզված, նշանակն էր Նրա մարդկային տնօրինության, որը թեպետեւ մարմնով երեւում էր, սակայն խորհուրդն անիմանալի էր մնում բոլոր ստեղծվածների համար: Նրա կոշիկների մի կապն անգամ, այսինքն՝ Նրա տնօրինության խորհուրդը, չէր կարող արձակել Հովհաննեսը: Իններորդ՝ հաստատում են տեսնողների վկայությունները, որոնք մարմնավոր աչքերով տեսան հարություն առած Քրիստոսին: Քանի որ նույն օրվա մեջ հինգ անգամ երեւաց. նախ՝ Մարիամ Մագդաղենացուն, որի մասին պատմում է Հովհաննեսը: Իսկ ի՞նչ պատճառով նախ կանանց երեւաց. որովհետեւ մահաբեր գուժը կնոջ միջոցով մտավ մեր բնության մեջ, հարկ էր, որ մարդկությանը նրանով էլ լիներ կենաց եւ փրկության ավետիսը: Երկրորդ՝ գերեզմանից վերադառնալիս՝ ճանապարհին, երեւաց նաեւ այլ կանանց, որոնք, ինչպես պատմում է Մատթեոսը. «Ընկան Նրա ոտքերը եւ երկրպագեցին Նրան»: Երրորդ՝ երեւաց Պետրոսին, ինչպես ասում է Ղուկասը. «Երեւաց Սիմոնին», իսկ Պողոսը կորնթացիների թղթում ասում է.



«Երեւաց նախ Կեփասին»: Եվ այս՝ երկու պատճառով. որպեսզի Պետրոսը չհուսահատվի ուրացության պատճառով, եւ որպեսզի ցույց տա մեղավորների հանդեպ աստվածային ողորմածությունը: Չորրորդ՝ Էմմավուսում երեւաց երկու աշակերտներին, որի մասին պատմում է Ղուկասը: Հինգերորդ՝ նույն երեկոյան փակված դռների միջով երեւաց բոլոր աշակերտներին: Տասներորդ՝ Քրիստոսի հարությունը ոչ միայն տեսնողների վկայություններից է հայտնի, այլեւ Իրենից՝ Քրիստոսից, քանի որ հարությունից հետո շոշափվեց Նրա մարմինը, Նա կերավ եւ խմեց աշակերտների հետ, խոսեց եւ ուղարկեց նրանց՝ մկրտելու, օրհնեց նրանց եւ նրանց աչքի առջեւ համբարձվեց երկինք: Իսկ նրանք գնացին եւ քարոզեցին մեռելներից հարություն առած Քրիստոսին, որի հարության շնորհիվ փրկվեցինք մենք՝ բոլոր հավատացյալներս:

Իսկ նրանք, ովքեր ուրանում են Քրիստոսի հարությունը, մոլորեցնում են տասը տեսակի վնասներով, մանավանդ կորստյան տանող հերձվածներով: Նախ՝ որովհետեւ հակառակվում են երեւելի եւ հայտնի ճշմարիտ դեպքերին: Երկրորդ՝ որովհետեւ սուտ են համարում մարգարեներին, որոնք հայտնեցին Քրիստոսի հարության մասին: Երրորդ՝ ունայն են ցույց տալիս առաքյալների քարոզությունը, ինչպես ասում է Պողոսը կորնթացիների թղթում. «Եթե Քրիստոս հարություն չի առել, ապա իզուր է մեր քարոզությունը»: Չորրորդ՝ որովհետեւ իրենք՝ ուրացողները ունայն են մնում Քրիստոսի հավատից եւ փրկությունից, ինչպես ասում է. «Իզուր է ձեր հավատը»: Հինգերորդ՝ որովհետեւ ասում է. «Եվ Աստծո սուտ վկաները եղած կլինենք, քանի որ Աստծո մասին վկայեցինք, թե հարություն տվեց Քրիստոսին», ինչպես ասում է Պետրոսը Գործքում, «Ում որ դուք խաչեցիք, որին Աստված հարություն տվեց մեռելներից», իսկ Պողոսը հռոմեացիների թղթում ասում է. «Նրա Հոգին, ով մեռելներից հարություն տվեց Քրիստոսին, կբնակվի ձեր մեջ»: Իսկ եթե որեւէ մեկը հիմար մտքով կարծում է, որ եթե Հայրը հարություն տվեց, ապա այդ Որդու փոքրությունն է նշանակում, թող այդպիսին իմանա, որ եթե չղջիկը արեւի լույսը չի տեսնում, այդ ոչինչ չի նշանակում արեւի եւ պարզ տեսնողների համար: Բայց աշակերտների ճշմարտությունը ցույց տանք սուրբ Կյուրեղից [օրինակ բերելով], որը «Պարապմանց գրքում» ասում է. «Սուրբ Գրքերն ու վարդապետները Երրորդությանը մի բնություն են ասում, մի կամք, եւ մի ներգործություն: Եվ քանի որ այս են խոստովանում բոլորը, ուրեմն եթե ասվում է, թե Հայրը հարություն տվեց Հիսուսին, [նշանակում է] Ինքն Իրենով հարություն առավ: Եվ եթե ասվում է, թե [Սուրբ] Հոգին հարություն տվեց Քրիստոսին, նույնպես նշանակում է, որ Ինքն Իրենով հարություն առավ, քանի որ միեւնույն են Իր, Հոր եւ Սուրբ Հոգու ներգործությունը: Դարձյալ՝ հարություն տալը Աստծո ամենակարող զորությանն է [հատուկ] եւ ոչ տկար մարդուն: Ապա ուրեմն նրանք, ովքեր մեկ Քրիստոսին բաժանում են երկու բնությունների՝ երկու Որդու եւ երկու գործերի, նրանց համար դյուրին է ասել, թե այլ մեկն է հարություն տվել Հիսուսին, ինչպես Ղազարոսին՝ Քրիստոսը: Եվ եղկելիներն ո՞ւր պիտի դնեն Հիսուսի՝ Իր աշակերտներին ասած խոսքը. «Ոչ ոքի չասեք ձեր տեսածի մասին, մինչեւ մարդու Որդին հարություն չառնի մեռելներից»: Եվ թե՝ «Իշխանություն ունեմ դնելու իմ անձը եւ իշխանություն ունեմ վերցնելու այն»: Եվ հրեշտակը գոչում էր վեմի վրա. «Խաչվածի՞ն եք փնտրում. Նա հարություն առավ»: Այսքանը այս մասին:

Վեցերորդ՝ առաքյալն ասում է, թե ովքեր ուրանում են Քրիստոսի հարությունը, «տակավին նույն մեղքի մեջ են մնում», այսինքն՝ եթե Քրիստոս հարություն չառավ, նաեւ չմեռավ, ոչ էլ մեղքը վերցրեց, մահը ջնջեց եւ դժոխքն ավերեց: Յոթերորդ՝ ովքեր ուրանում են հարությունը, նրանք նաեւ Հիսուսին մարդացած եւ Կույսից ծնված չեն խոստովանում, քանի որ նրանք չեն հավատում այն բանին, ինչի համար Հիսուս մարդանալով՝ ծնվեց եւ շրջեց մեր մեջ: Ուրեմն եւ սուտ են համարում ավետարանիչներին, որովհետեւ ովքեր գրեցին Նրա հարության մասին, գրեցին նաեւ ծնվելու մասին:

Ութերորդ՝ ովքեր ուրանում են Քրիստոսի հարությունը, ուրանում են նաեւ մեր մկրտությունը. մենք Քրիստոսի մահվամբ ենք մկրտվում, Նրա հետ թաղվում ենք, որպեսզի Նրա հարությանն էլ հաղորդ լինենք: Քանի որ երեք անգամ ջրում ընկղմելը Տիրոջ եռօրյա թաղման եւ հարության նշանակն է: Իններորդ՝ նրանք չեն հավատում նաեւ Քրիստոսի երկրորդ գալստյանը, քանի որ ովքեր ուրանում են Նրա հարությունը, նրանք չեն հավատում նաեւ Նրա համբարձվելուն, նույն մարմնով Հոր աջ կողմում նստելուն, Հոր փառքով գալստյանը եւ արդար Դատաստանին: Տասներորդ՝ Քրիստոսի հարությունը մերժողների հերձվածի մոլորությունն այն է, որ մերժում են ե՛ւ հավիտենական կյանքը, ե՛ւ սուրբերի երանությունը: Այսքանը Քրիստոսի հարության մասին:

*Շարունակելի*

***Աշխարհաբարի վերածեց***
***Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ***

# ՓՐԿՉԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

## Հինկտակարանյան համապատկերում

**Մատթ. ԻԱ 1-11, Մարկ. ԺԱ 1-11**
**Ղուկ. ԺԹ 29-38, Հովհ. ԺԲ 12-19**

*Սկիզբը՝ էջ 2*

Այսօրինակ ձեւով բազմությունը փաստացի Քրիստոսին իրեն թագավոր էր ճանաչում ու հռչակում՝ զգեստները փռելով Նրա ոտքերի առջեւ՝ ի նշան սրտերի խոնարհության: Մյուսները ծառի ճյուղեր էին նետում այնպես, ինչպես արել էին այն ժամանակ, երբ Սիմոն Մակաբեն Երուսաղեմ էր մտել հռոմեացիների դեմ տարած իր ամենանշանավոր հաղթանակներից մեկից հետո (հմմտ. Ա Մակ. ԺԳ 51): Հրեական պատմության գերագույն աղետներից մեկը Երուսաղեմի գավթումն էր Եպիփան Անտիոքացու կողմից՝ մոտ Ն. Ք. 175 թ.: Վերջինս մտադրվել էր վերացնել հրեականությունը եւ Պաղեստին ներմուծել կյանքի ու պաշտամունքի հունական ձեւը: Ուստի կանխամտածված Երուսաղեմի Տաճարը պղծեց՝ կուռքեր տեղադրելով եւ անառակությամբ լցնելով (հմմտ. Ա Մակ. Ա 21-24): Այդժամ էր, որ մակաբայեցիները նրա դեմ ոտքի ելան եւ իրենց հայրենի երկիրն ամբողջությամբ ազատագրեցին: Երբ վերականգնվեց Երուսաղեմը, եւ վերակարգվեց պղծության ենթարկված Տաճարը, հաղթանակը նշվեց մեծագույն տոնախմբությամբ. «Թավ ծառերից գեղեցիկ ճյուղեր ու արմավի ոստեր վերցնելով՝ մատուցեցին Նրան, որ հաջողություն էր տվել իրենց՝ սրբագործելու Իր սրբավայրը» (Բ Մակ. Ժ 7):

Նկատելի է, որ նմանօրինակ արարողակարգով ժողովրդական բազմությունը Քրիստոսին ընդունեց ոչ միայն որպես Թագավորի, այլեւ Փրկչի, Ով գալիս էր ապականությունից ու եղծումից Աստծո Տունը մաքրելու կանխորոշված մտադրությամբ, ինչպես Հուդա Մակաբեն էր արել Իրենից 200 տարի առաջ (հմմտ. Ա Մակ. Դ 36-51): Մաղաքիա մարգարեն էլ կանխագուշակել էր անսպասելիորեն Տիրոջ Տաճար գալը (հմմտ. Մաղ. Գ 1): Իսկ Եզեկիել մարգարեին տեսիլքում ցույց էր տրվել Աստծո ահավոր դատաստանը, որ Սրբարանից էր սկսվել (հմմտ. Եզեկ. Թ 6):

Հետագա դեպքերի ժամանակ տեսնում ենք, որ Հիսուս մտնում է Տաճար եւ այն առեւտրականների ապականությունից մաքրում: Սա տեսանելի նախապատկերն ու նշանակն էր մասնավորապես մեր հոգիների տաճարների եւ ընդհանրապես դրանց հավաքական միության՝ Աստծո Տաճարի մաքրման ու սրբագործման:

Ժողովրդական բազմությունը, ի հավելումն ընդունելության այսօրինակ կերպի, Նրա առջեւից եւ ետեւից գնալով, Նրան ողջունում էր՝ «Ովսաննա՜ («Աղաչում եմ, փրկի՛ր»), օրհնյա՜լ լինես դու, որ գալիս ես Տիրոջ անունով, ո՜վ թագավոր Իսրայելի» (Հովհ. ԺԲ 13) օրհնաբանությամբ՝ արտահայտելով իր բարձր գիտակցությունն ու ըմբռնումը Քրիստոսի նկատմամբ:

Այս օրհնաբանությունը մեջբերված էր Սաղմոսագրքից (հմմտ. Սաղմ. ՃԺԷ 26) եւ խորունկ նստվածք ուներ ժողովրդական գիտակցության մեջ: Այս սաղմոսն անմիջականորեն առնչվում է Տաղավարահարաց տոնին, որը եգիպտական ստրկությունից հրեաների ազատագրվելու եւ արդարության հաղթանակելու խորհուրդն էր արտահայտում: Փաստորեն սա բնույթով հաղթանակողի սաղմոս էր: Հայտնի է, որ մեծագույն շուքով Տաղավարահարաց հաղթական տոնակատարություն էր արվել նաեւ Եզրաս քահանայի գլխավորությամբ Երուսաղեմ քաղաքի ու նրա քանդված պարիսպների վերականգնումից, հրեաների Բաբելոնի գերությունից հայրենի երկիր վերադարձից եւ պաշտամունքի վերակազմավորումից հետո (հմմտ. Նեեմ. Ը 14-18):

Չնայած որ այժմ Քրիստոս գնում էր նյութական աղքատությամբ եւ անշքությամբ, այնուհանդերձ հակառակ աշխարհային պատկերացումների՝ հինկտակարանյան վերոնշյալ մարգարեական հատվածների հեղինակները տարբեր պատկերներով նկարագրել ու ներկայացրել են Նրան որպես Մեսիա եւ Նրա թագավորությունը՝ մեսիական:



Հենց այս թագավորության գալուստն էր ողջունում ժողովուրդը՝ դիմավորելով այն ովսաննաներով, ինչպես արել էր Սողոմոնի թագադրության ժամանակ (հմմտ. Գ Թագ. Ա 39): Խանդավառ ընդունելությունն օտար տիրապետության ներքո հեծեծող ժողովրդի սպասումների ու տեսլականի շոշափելի արձագանքն էր մեսիական թագավորության գալստյան (հմմտ. «քո թագավորությունը թող գա» (Մատթ. Զ 10), հաղթանակի (հմմտ. «...եւ եկավ, որ հաղթի» (Հայտն. Զ 2) եւ մշտատեւության (հմմտ. «Տիրոջ անունը կօրհնվի հավիտյան» (Սաղմ. ՀԱ 17):

Եվ եթե Նրա գալուստը շոշափելի արձագանք ունեցավ հասարակ ժողովրդի կողմից՝ հանդիսավորությամբ նշանավորելով Նրա հաղթական մուտքը, ապա այն երկրի մեծամեծներից անտեսվեց, իշխանավորների կողմից ժողովրդին պաշտոնապես չազդարարվեց, ոչ էլ պաշտոնական հանդիսավորությամբ ուղեկցվեց: Քահանայապետերն ու ժողովրդի ծերերը, այսինքն՝ հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունը միայն ժողովրդի բազմությանը միացավ այն ժամանակ եւ այն նպատակով, որպեսզի Նրան մահվան դատապարտի. «Իրավ որ, եղբայրնե՛ր, ձեր կոչումին նայեցե՛ք. ըստ մարմնի՝ ոչ շատ իմաստուններ, ոչ շատ հզորներ եւ ոչ շատ ազնվականներ կանչվեցին. Աստված աշխարհի ոչ-տոհմիկներին, արհամարհվածներին եւ ոչինչներին ընտրեց, որպեսզի իրենք իրենց մի բան կարծողներին ոչնչի վերածի» (Ա Կորնթ. Ա 26, 28):

Այս ամենի համայնապատկերում իրական ու վավերական է ժողովրդական ընդունելության սրտաբաց ու հոգեբուխ կերպը, որով պարզ, հասարակ բազմությունը փառավորեց մեսիական թագավորության գալուստը, եւ որի նախապատրաստական ընթացքն ու հայտնությունն ենք տեսնում Հին Կտակարանում: Քրիստոս Ինքն էլ փառավորում եւ ողջունում է մարդկանց՝ նայելով հոգիներին եւ ոչ թե պաշտոնին, անվանը եւ փառքի աստիճանին՝ հրավիրելով Իր առջեւ բացել ոչ թե պալատները, այլ սրտերը, ինչպես սաղմոսերգուն է ասում. «Վե՛ր քաշեցեք, իշխաննե՛ր, դռները ձեր, թող բացվեն հավիտենական դռները, եւ փառքի արքան թող ներս մտնի» (Սաղմ. ԻԳ 7), այսինքն՝ բացե՛ք ձեր սրտերի դռները՝ ընդունելու փառքի Տիրոջն ու Իր արքայությունը, Ով գալիս է Տիրոջ անունով եւ միջնորդ է մեր եւ Աստծո միջեւ:

***Տ. Ռուբեն աբղ. ԶԱՐԳԱՐՅԱՆ***

# ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ

## ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ



Սկիզբը՝ 2004-ի թիվ 18-24, 2005-ի թիվ 1- 4

### Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՄԵԿ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր նախնիք, պնդելով, որ Քրիստոս անապակ գինի է վերցրել Ս. Հաղորդության խորհրդի հաստատման ժամանակ, իբրեւ ապացույց բերում են նաեւ սուրբ Հովհան Ոսկեբերան Հայրապետի (Քրիստոսի Եկեղեցու լուսազարդ այրերից է: Ծնվել է 347 թ. Անտիոքում, ճարտասանության մեջ հմտացել Լիբանիոսի դպրոցում: 381-ին Մելետիոս Անտիոքացու կողմից ձեռնադրվել է սարկավագ, իսկ 386-ին Փլաբիանոսի կողմից՝ երեց: Վայելած հեղինակության եւ սրբակեցության շնորհիվ 398-ին ընտրվել է Կ. Պոլսի պատրիարք: Բազմիցս աքսորվել է՝ 407 թ. կյանքն ավարտելով աքսորի ճանապարհին՝ Կոմանայում: Բազմաժանր է նրա մատենագրական վաստակը՝ մեկնություններ, ճառեր, ներբողներ, թղթեր եւ այլն, որոնք իրենց բարերար ազդեցությունն են թողել քրիստոնեական քարոզխոսության վրա: Նրա գործերը հայերեն են թարգմանվել արդեն իսկ հեղինակի կենդանության օրոք) մեկ վկայությունը: Վերջինս մեր հայրերն օգտագործում են այն ժամանակ, երբ ապացուցում են, որ Քրիստոս Վերջին ընթրիքի ժամանակ ջուր չխառնեց Իր վերցրած բաժակի մեջ: Այսպես՝ սուրբ Հովհանը Մատթեոսի Ավետարանի իր մեկնության ԻԹ ճառում, մեկնաբանելով նույն Ավետարանի ԻԶ 29 համարը՝ *«Բայց ասեմ ձեզ ո՛չ եւս արբից յայսմ հետէ ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան հօր իմոյ»*, ասում է. *«Եւ ընդէ՞ր ո՛չ ջուր արբ յորժամ յարեաւ, այլ գինի, զի եւ զմիւս չար հերձուածն արմատաքի խլեսցէ, զի են ոմանք որ ի խորհուրդն ջուր ի կիր արկանեն, ցուցանէ՝ թէ յորժամ զխորհուրդն աւանդեաց՝ գինով աւանդեաց. եւ յորժամ յարեաւ՝ առանց խորհրդոյ ի լոկ սեղանն զգինին ի կիր արկ. ի ծննդենէ որթոյ ասէ, եւ որթն գինի եւ ո՛չ ջուր ծնանի»* (Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպօլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826, էջ 106, տե՛ս նաեւ սույն հատվածի ռուսերեն եւ անգլերեն թարգմանությունները, Избранные творения святого отца нашего Архиепископа Костантинограда Иоанна Златоуста, Толкование на святого Матфея евангелиста, книга вторая, Издательский отдел Московского Патриархата 1993, стр. 822, A select library of the Nicene and post-Nicene Fathers of the Christian Church, edited by Philip Schaff, v. X, Saint Chrysostom, Homilies on the Gospel of Mathew, Michigan, 1983, p. 492: Ս. Հայրապետի այս վկայությունը բառացի եւ ոչ բառացի վկայակոչված է այս խնդրի հետ կապված այլ աշխատություններում եւս (տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 479, **Գարեգին Վ. Յովսէփեան**, Խոսրովիկ Թարգմանիչ, էջ 194-195, «ԱՀ», էջ 259, 402, «ԳԹ», էջ 470, 612, 635, **Անանիա Սանահնեցի**, էջ 253, **Պողոս Տարոնացի**, «Ընդդէմ Թէոփիստեայ», էջ 208, «Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի», տե՛ս «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց...», էջ 422, «ԹԸ», էջ 181, Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 131, Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս Վարդապետի Տարօնեցւոյ, էջ 230: ՄՄ ձեռ. N 9622, էջ 728, **Աղեքսանդր Վ. Պալճեան**, նշվ. աշխ., էջ 245, «Թուղթ առ Վրացիս», էջ 366, «Թուղթ առ Կարնեցիս», էջ 566, **Աբէլ քահանայ Օղլուգեան**, նշվ. աշխ., էջ 150, Դրախտ ցանկալի, էջ 369, «Հանդիսարան», էջ 339, «Լոյս», 1905, էջ 610):

Այս ծանոթագրությունից պարզ է դառնում, որ Ոսկեբերան Հայրապետի վերոբերյալ վկայությունը զորավոր զենք եւ ամուր վահան է եղել դարերի ընթացքում մեր Եկեղեցու հայրերի եւ վարդապետների համար՝ հիմնավորելու եւ ապացուցելու անապակ գինով պատարագելու Հայ Եկեղեցու Սրբազան Ավանդությունը: Նրանք միշտ ընդդիմացել են մյուսներին՝ մեջբերելով Տիեզերական Եկեղեցում անառարկելի հեղինակություն վայելող Ոսկեբերանի վերոգրյալ վկայությունը: Ինչպես տեսնում ենք, առաջին անգամ մեր մատենագրության մեջ Ոսկեբերանի այս խոսքն օգտագործել է Սահակ Ձորափորեցի Կաթողիկոսը *«Ընդդէմ երկաբնակաց նեստորականաց»* իր հայտնի գործում՝ մասնավորապես ասելով. *«...զի ի բերոյ որթոյ ասէ, զի որթն գինի ծնանի եւ ոչ ջուր, այլ զմիւս հերձուածն արմատաքի խլեսցէ, զի են ոմանք, զի ի սուրբ խորհուրդն ջուր խառնեն»* («Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 479): Մեջբերելով սուրբ հոր խոսքը՝ այնուհետեւ նա եզրակացնում է. *«Տեսանես զի չար հերձուած ասէ զայն, որ զջուրն խառնեն ի սուրբ խորհուրդն»* (նույն տեղում): Այսինքն՝ մինչեւ Տրուլի ժողովը, ուր եւ քննության առարկա էր դարձել նաեւ այս խնդիրը, սուրբ Հայրապետի սույն արտահայտությունն արդեն իսկ կիրառվել է մեր Եկեղեցում՝ ծառայելով որպես հզոր կռվան՝ անապակ գինով Հայ Եկեղեցու պատարագելու Սրբազան Ավանդությունը ջատագովելու համար: Ուշադրության է արժանի այն պարագան, որ Ոսկեբերանի *«զի են ոմանք որ ի խորհուրդն ջուր ի կիր արկանեն»* արտահայտությունը Հայրապետի մոտ հետեւյալ ձեւակերպմամբ է՝ *«զի են ոմանք, զի ի սուրբ խորհուրդն ջուր խառնեն»* (նույն տեղում): Այսինքն՝ մեր Եկեղեցում Ոսկեբերանի այս խոսքն ընկալվել է իբրեւ մի արտահայտություն ընդդեմ այն մարդկանց, ովքեր Ս. Խորհրդի ժամանակ ջուր են խառնում եւ ոչ թե միայն ջրով պատարագում: Բայց, ի տարբերություն մեր Եկեղեցում արմատացած այս ընկալման, 1316 թ. Ադանայի ժողովում ընդունված սահմանադրության մեջ, ուր նաեւ քննության առարկա է դարձել Ոսկեբերանի այս արտահայտությունը, տուրք տալով բյուզանդական մեկնաբանությանը՝ ասվում է. *«...զի թէ խառնումն ասացեալ էր, յիրաւի էր կարծել զայս. այլ ի կիր արկանեն՝ ասէ, այսինքն՝ ջրով միայն գործեն զմարդեղութիւնն Քրիստոսի եւ զմահն»* (**Աղեքսանդր Վ. Պալճեան**, նշվ. աշխ., էջ 287):

Պետք է նշել, որ Քրիստոսի Եկեղեցու լուսազարդ այս հոր սույն միտքը միանշանակ չի ընկալվել մյուս քրիստոնեական Եկեղեցիների կողմից՝ տեղի տալով տարաբնույթ մեկնությունների. մասնավորապես Բյուզանդական Եկեղեցու մեկնաբանությամբ ս. Հովհան Ոսկեբերան Հայրապետի քննադատությունն այստեղ ուղղված է ոչ թե Ս. Պատարագի ժամանակ գործածվող գինու մեջ ջուր խառնողներին (Ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ՝ ջրամատուցողներ, օտար բառով՝ Aquarier, hydroparastatae, hydrothei են կոչվել այն աղանդավորական շարժումները, որոնք մասամբ գաղափարական-աստվածաբանական, մասամբ էլ ճգնավորական պատճառներով մերժում էին գինու օգտագործումը Ս. Պատարագի մեջ՝ այն կատարելով միայն ջրով:

Շարունակությունը՝ էջ 6

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

*Սկիզբը՝ էջ 3*

Սեբաստիայի միտրոպոլիտին ուղղված նամակը ոճով խիստ է՝ չնայած Հայոց կաթողիկոսի այն խոսքերին, թե գրել է. «... ոչ թշնամութեան բանս հակառակ թշնամանաց»: Նա միաժամանակ նշում է, որ չի կարող իրեն զսպել՝ տեսնելով, որ «բազում անգամ եռետիկոս յեղանակեալ» են հայերը: Իր ասածները նա փաստարկում է Աստվածաշնչից մեջբերումներ անելով: Դրանով չբավարարվելով՝ նա դիմում է եկեղեցու սուրբ հայրերի՝ Աթանաս եւ Կյուրեղ Ալեքսանդրացիների, Կյուրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Յովհան Ոսկեբերանի եւ ուրիշների ասույթներին, որոնք նշանակալից տեղ են գրավում նամակում: Ըստ որում՝ կռվաններ բերելով այս կամ այն աստվածաբանից՝ նա չի հիշատակում Դեոսկորոս Ալեքսանդրացուն, Պետրոս Անտիոքացուն եւ ոչ էլ հայ վարդապետներին՝ առավելապես հենվելով հույն աստվածաբանների վրա: Պաշտպանելով Յայոց եկեղեցին՝ նա սկսում է մեղադրել հույներին՝ պատկերները (իկոնա) աստվածարելաբար պաշտելու համար՝ ջատագովելով միաժամանակ հայերի կողմից պատկերները լվալն ու օծելը: Մերժում է բաժակին ջուր խառնելը, ներքինիներին քահանայացնելը, եկեղեցականների մազերը վարսավոր երկարեցնելը եւ այլն: Նամակի վերջում նա հույներին խրախույս է կարդում «խոստովանիլ մի եւ անբաժանելի բնութեամբ զեկեալն եւ զգալոցն» եւ միասին երկրպագել Երրորդությանը: Ասողիկի հաղորդմամբ՝ այս նամակից միտրոպոլիտը ամոթալից եղավ: Դաժան եղավ



Սեբաստիայի միտրոպոլիտի ճակատագիրը: Ուղարկվելով հաշտության բանակցությունների Բուլղարիա՝ նա ստիպված էր ընդունել Բուլղարիայի՝ ազգությամբ հայ, ծագումով Դերջանից Սամվել Կոմսաձագ կոչված թագավորի պահանջը՝ իրեն կնության տալու կայսեր քրոջը: Սակայն կայսրը քրոջ փոխարեն ուղարկեց իր աղախիններից մեկին, եւ երբ խաբեությունը բացահայտվեց, Բուլղարիայի թագավորի հրամանով նա ողջակիզվեց՝ նախապես փաթաթված լինելով եղեգով եւ խռիվով:

*Շարունակելի*

**ԲԱԲԿԵՆ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

# ՇԵՆՈՒԴԱ Գ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

## ՄԱՍ Բ
## ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ



*Սկիզբը՝ 2004-ի թիվ 23-24, 2005-ի թիվ 1-4*

### ԳԼՈՒԽ Թ

### ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՆ ԱՆԺԱՄԱՆԱԿ Է

*1. Տեր Հիսուսի անժամանակությունը կարող ենք եզրակացնել հրեաներին ուղղված Նրա հետեւյալ խոսքից.*

«Նախքան Աբրահամի լինելն եմ Ես» (Հովհ. Ը 58): Սա նշանակում է, որ Նա ԿԱՐ, գոյություն ուներ հազարավոր տարիներ նախքան մարմնով Իր գալուստը, նախքան հայր Աբրահամը: Հրեաները ճիշտ հասկացան, որ Նրա խոսքը վերաբերում է Նրա աստվածությանը, ուստի «քարեր վերցրին, որ գցեն Նրա վրա» (Հովհ. Ը 59):

*2. Տերը հայտարարում է նաեւ, որ գոյությամբ Ինքը նախորդում է Իր նախահայր Դավթին:*

Թեեւ ըստ ազգաբանության՝ Նա Դավթի հետնորդն է, սակայն «Հայտնության» գրքում ասում է. «Ես՝ Հիսուս... Դավթի արմատն ու սերունդն եմ» (Հայտ. ԻԲ 16): «Դավթի սերունդ» արտահայտությունը պարզ ու հասկանալի է, որովհետեւ Նա Դավթի հետնորդն է: Սակայն «արմատ» բառը նշանակում է, որ Նա գոյություն է ունեցել նախքան Դավիթը: Սա վկայվում է նաեւ Աստծո աթոռը շրջապատող երեցներից մեկի կողմից, ով տեսիլքը տեսնող ս. Հովհաննեսին ասում է. «Ահա հաղթեց Առյուծը Հուդայի ցեղից՝ Դավթի արմատը» (Հայտ. Ե 5) («Հայտնության» գրքից սույն գրքում բերվող բոլոր տեղիները թարգմանված են ըստ հունարեն բնագրի, քանի որ նրանց գրաբարյան թարգմանությունը (կատարվել է ուշ շրջանում՝ ԺԲ դար), ունի անճշտություններ):

*3. Նա նաեւ գոյություն է ունեցել «նախքան արուսյակը» (այսինքն՝ նախքան արարչության պատմության սկիզբը):*

Աստվածաշունչը հաստատում է, որ Քրիստոսը եղել է նախքան Դավիթը, Հուդան ու Աբրահամը, որովհետեւ սաղմոսում Տեր Աստված ասում է Նրան. «Արգանդից, նախքան արուսյակը ծնեցի Քեզ» (Սաղմ. ՃԹ 3):

*4. Նա գոյություն է ունեցել նախքան աշխարհի սկիզբը եւ նախքան բոլոր հավիտյանները:*

Հորն ուղղված Իր խոսքում Նա ասում է. «Եվ այժմ փառավորի՛ր Ինձ, Հա՛յր, Քեզ մոտ եղած այն փառքով, որն ունեի Քեզանից նախքան աշխարհի լինելը» (Հովհ. ԺԷ 5): Նաեւ՝ «...որովհետեւ սիրեցիր Ինձ նախքան աշխարհի լինելը» (Հովհ. ԺԷ 24): Այս ամենն ապացուցում է, որ Տեր Հիսուս Քրիստոսը գոյություն է ունեցել նախքան աշխարհի հաստատումը:

*5. Նա գոյություն է ունեցել նախքան արարչությունը, որովհետեւ այն Իր ձեռքի գործն է:*

Այնտեղ, ուր ս. Պողոս առաքյալը Տեր Հիսուսին ներկայացնում է իբրեւ «աներեւույթ Աստծո պատկերը» (Կող. Ա 15), ասում է. «Ամեն ինչ Նրանով եւ Նրա համար հաստատվեց: Եվ Նա ամեն ինչից առաջ է, եւ ամեն ինչ Նրանով ամբողջական դարձավ» (Կող. Ա 16-17):

Այսպիսով, Նա ամեն ինչից առաջ էր... Իսկ ինչո՞ւ...

Որովհետեւ ամեն ինչ ստեղծվել է հենց Նրա՛ կողմից:

*6. Կամ՝ այլ խոսքով, այն փաստը, որ Նա է ամեն ինչ ստեղծել, նշանակում է, որ Նա ամեն ինչից առաջ էր:*

Ս. Հովհաննես Ավետարանիչն այս առնչությամբ ասում է. «Ամեն ինչ Նրանով եղավ, եւ առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղավ» (Հովհ. Ա 3): Նաեւ՝ «Աշխարհում էր, եւ աշխարհը Նրանով եղավ» (Հովհ. Ա 10): Հետեւաբար, եթե աշխարհը Նրանով է ստեղծվել, նշանակում է՝ Նա կար նախքան աշխարհն ու ամեն ինչ:

Շարունակությունը՝ էջ 7

## ԽԱՉԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԸ

# ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ

### Աղոթական հարատեւություն

Մեզ առաջնորդում է Սեւանի Վազգենյան դպրանոցի փոխտեսուչ
**Տ. Մինաս քհն. Մարտիրոսյանը՝**
ուղեկցությամբ Հայկ Կարապետյանի

> «Մի՛ դատապարտիր անձդ քո աղոթքներով»:
>
> *Յակոբ Մծբնա Հայրապետ*

**- Հայտնի է, որ Մեծ պահքի 5-րդ՝ Դատավորի կիրակին նվիրված է հարատեւ աղոթքի գաղափարին: Նաեւ այն, որ ինչպես այս, նույնպես եւ սրան նախորդող երկու՝ Անառակի եւ Տնտեսի կիրակիներն իրենց անունները ստացել են Ղուկասի Ավետարանի համապատասխան առակներից:**

**Սակայն ի տարբերություն մյուս երկուսի՝ այս դեպքում ավետարանիչը նախապես բացատրում է Հիսուսի պատմած առակի նպատակը. «Մի առակ էլ ասաց նրանց այն մասին, թե նրանք ամեն ժամ պետք է աղոթեն ու չձանձրանան»:**

- Ակնհայտ է, որ այդ երեք առակները եւ այդմ՝ Մեծ պահոց համապատասխան երեք կիրակիները հոգեւոր առումով սերտորեն շաղկապված են միմյանց: Ճշմարիտ զղջմամբ դարձի եկած անառակ զավակը վերադարձել է հոր տուն, այսինքն՝ եկեղեցի, ստացել է «տնտեսություն» եւ այն ճիշտ ձեւով վարելու խորհուրդ: Սակայն այսքանը բավարար չէ. նա պետք է մշտական եւ ճիշտ հաղորդակցության մեջ լինի երկնավոր Հոր հետ: Եվ այդ հաղորդակցության, այսինքն՝ հարատեւ աղոթական վիճակի ընթացքում, եթե նույնիսկ երբեմն իր խնդրածների պատասխանը երկար ժամանակ չի ստանում, նա երբեք չպետք է ձանձրանա, վհատվի, այլ հարատեւի իր աղոթքի մեջ՝ միշտ հուսալով եւ վստահ լինելով, որ Աստված անպայման մի օր իր համար կկայացնի ամենաճիշտ եւ բարի վճիռը: Եթե մինչեւիսկ անիրավ դատավորն ընդառաջ գնաց այրի կնոջ թախանձանքներին, ապա «Աստված արդարություն չի՞ անի Իր այն ծառաներին, որոնք գիշեր ու ցերեկ աղաղակում են...» (Ղուկ. ԺԸ 7): Սակայն այստեղ շատ կարեւոր է առակի եզրափակիչ միտքը, երբ Հիսուս հարց է տալիս. «Իսկ երբ մարդու Որդին գա, արդյոք երկրի վրա հավատ կգտնի՞» (Ղուկ. ԺԸ 8): Այսինքն՝ առանց ինքնամոռաց հավատի եւ Աստծո երկյուղի, ինչի մասին մշտապես ասել են հայրերը, առանց Տիրոջ կամքին ապավինելու ո՛չ ճշմարիտ աղոթք կա, եւ ո՛չ էլ՝ դրա պատասխանը:

**- Այրի կնոջ գլխավոր զենքը հարատեւությունն էր, որով նա հասավ իր նպատակին: Երբեմն, սակայն, այն շփոթում են շատախոսության հետ, որից զգուշացնում էր Տերը (հմմտ. Մատթ. Զ 7): Ինչպե՞ս տարբերել:**

- Ինչո՞ւ միայն այրի կնոջ: Հարատեւ աղոթքի վառ օրինակը մեր Տերն Ինքն էր տալիս՝ շատ գիշերներ անցկացնելով աղոթքով: Երկար ու անդադար աղոթել են նաեւ առաքյալները, նրանց հետեւորդները: Մեր հայրերի մեջ եղել են մարդիկ, որոնք օրվա մեծ մասն աղոթքով են անցկացրել, մանավանդ՝ անապատական ճգնավորները: Եվ նրանց աղոթքը բնավ չի դիտվել իբրեւ շատախոսություն: Շատախոսությունը, որից զգուշացնում է Տերը, ո՛չ խոսքերի առատությունն է եւ ո՛չ էլ աղոթքի երկարատեւությունը, այլ այն, երբ երկրավոր, մարմնական, եսասեր ու դատարկ բաներ ենք խնդրում մեր փառքի համար, որոնք մեր հայրերը աղբ են համարում այն հոգեւոր բարիքների համեմատ, որ Աստված կարող է մեզ տալ ճշմարտապես՝ հոգով դրանք խնդրելու դեպքում:

**- Տիրոջը մերձենալու ճշմարիտ ճանապարհը դժվարին է: Հայրերը զգուշացնում են, որ Աստծու կողմից պահանջվող սուրբ աղոթքը խեղաթյուրելու դեպքում աղոթողը ոչ միայն որեւէ պտուղ չի կարող ստանալ, այլեւ իր վրա կդարձնի Տիրոջ արդար ցասումը, որով անձի փրկության այս միջոցը՝ աղոթքը, կարող է դառնալ կորստյան պատճառ: «Մի՛ դատապարտիր անձդ քո աղոթքներով»,- ասում է Հակոբ Մծբնա Հայրապետը: Որեմն ինչպե՞ս չի կարելի աղոթել:**

- Դրա ամենադասական օրինակը եւս հենց Տիրոջ ասած մեկ այլ՝ փարիսեցու եւ մաքսավորի մասին առակն է: Հիշո՞ւմ եք. «Այս առակն էլ ասաց ոմանց, որ իրենք իրենցով պարծենում էին, թե արդար են, եւ արհամարհում էին ուրիշ շատերին» (Ղուկ. ԺԸ 9): Առակը սխալ կազմակերպված աղոթքի դասական նմուշ է, իսկական փարիսեցու աղոթք: Համեմատելով իրեն մեղավորների եւ հենց իրենից քիչ այն կողմ կանգնած եւ գլխիկոր կուրծքը ծեծող մաքսավորի հետ՝ փարիսեցին գոհություն է հայտնում Աստծուն, որ ինքը նման չէ նրան: Եվ հպարտությամբ իրեն է վերագրում իր ունեցած բոլոր շնորհներն ու առաքինությունները՝ Պարգեւատուի փոխարեն: Առաջին հերթին հենց ա՛յս հպարտությունից ու փառասիրությունից պետք է հեռու մնալ, որպեսզի անձդ չդատապարտես աղոթքներով: Անշուշտ, աղոթական հպարտության մեկ այլ տեսակ էլ կա, որը հատուկ է կեղծավորներին, եւ որի մասին եւս զգուշացնում է Ավետարանը. դա ի ցույց մարդկանց աղոթելն ու մարդկանցի՛ց գովեստ ստանալու ակնկալիքն է, որի մասին Տերն ասում է՝ այդ իսկ է նրանց վարձը, քանի որ իրենց նպատակն էլ հենց դա էր՝ մարդկանցից գովվելը:



**- Ավետարանը հորդորում է անդադար աղոթել: Սակայն եթե մեկը բազմազբաղ է աշխատանքով, այլեւայլ հոգսերով, ինչի պատճառով չի կարող աղոթքի կանգնել, այլ միայն մտքով է Աստծու հետ, դա կարո՞ղ է աղոթք կոչվել:**

- Իհարկե: Աղոթք է անգամ մեր կեցվածքը, մեր արտաքինը, շարժուձեւը: Հայրերից մեկն իր աշակերտների հետ պիտի քարոզեր: Բայց ստացվեց այնպես, որ նրանք զրուցելով մի մեծ շրջան կատարեցին քաղաքով: Եվ երբ վերադարձան նախկին տեղը, աշակերտը մտահոգ հիշեց, որ իրենք չքարոզեցին: Եվ վարդապետն ասաց, որ իրենք արդեն իսկ քարոզեցին իրենց կեցվածքով: Ճիշտ այդպես էլ աղոթքը սկսվում է մեր արտաքին կեցվածքից իսկ: Ինչ խոսք, մտքում նույնպես կարելի է աղոթել: Ճիշտն ասած՝ իսկական աղոթքը հենց այդպես էլ պետք է լինի, որ կողքինդ անգամ չիմանա, որ դու աղոթում ես: Այսինքն՝ կարեւորը սրտո՛ւմ գոչելն է, ինչպես ասում են հայրերը, եւ Աստված, միեւնույն է, կլսի:

**- Ո՞ր աղոթքն է ավելի հաճալի Աստծուն՝ առանձնակա՞ն, թե՞ ընդհանրական:**

- Ամեն մեկն իր տեղն ունի, եւ հավասարապես երկուսն էլ կարեւոր են: Հիսուսն ասում է. «Որտեղ երկու կամ երեք հոգի Իմ անունով հավաքված են, այնտեղ եմ ես՝ նրանց մեջ»: Պողոսը նույնպես եբրայեցիների թղթում հորդորում է քրիստոնյաներին հաճախ մեկտեղ հավաքվել: Առաջին դարերի քրիստոնյաները հավաքվում էին՝ աղոթքի ընդհանրական կարգը կատարելու: Միասնական աղոթքները՝ Պատարագը, ժամերգությունը, առաջին հերթին կարեւոր են նրանով, որ հույժ ընդունելի եւ հաճո են Աստծուն. չէ՞ որ Աստված ուզում է, որ մենք միաբան լինենք, եւ մեր սերը Տիրոջ հանդեպ նաեւ դրանով է արտահայտվում:

**- Հայրերը հորդորում են՝ թե՛ առանձնական եւ թե՛ ընդհանրական աղոթքի ժամանակ ամբողջովին տրվել միակ Աստծու փառաբանությանը, նաեւ խորհուրդ են տալիս չկենտրոնանալ որեւէ պատկերի վրա, մտքերը չթափառեցնել եւ զգայարանները զերծ պահել արտաքին որեւէ ազդեցությունից:**

- Ճշմարիտ աղոթքի կարեւորագույն պայմաններից է դա: Հարկ է, որ աղոթքը սկսելուց առաջ իսպառ կտրվենք արտաքին ազդակներից, տպավորություններից ու հիշողություններից, այլապես եթե պատրանքներով ենք սկսում աղոթքի մեջ հարատեւել, չարը բաց չի թողնում առիթը, եւ ինքն էլ է բերում այլազան պատկերներ, որ մեր միտքը իսպառ շեղի եւ աղոթքն անպտուղ դարձնի: Այնպես որ, պետք է շատ զգույշ լինել:

Աղոթելիս շատ կարեւոր է նաեւ բացարձակ ներողամտության հանգամանքը: Տերը Լեռան քարոզում հորդորում է սեղանի վրա ընծան մատուցելուց առաջ գնալ եւ հաշտվել եղբոր հետ, որը քո դեմ ոխ ունի, եւ նոր միայն մատուցել ընծան: Առավել եւս, եթե մենք քեն ունենք մեր եղբոր հանդեպ, ապա մեր ընծան, մեր աղոթքը երբեք չի ընդունի Աստված: Չէ՞ որ որեւէ մեկը չի կարող, չսիրելով մերձավորին, սիրել Աստծուն:

**- «Սուրբ սրտո՛վ եւ խոնարհ հոգո՛վ աղոթեցեք»,- ասում է Գրիգոր Լուսավորիչը՝ նկատի ունենալով աղոթելիս զղջալու եւ մեղքերի թողություն հայցելու կարեւորությունը...**

- Անշուշտ: Միշտ սկսելով գոհաբանական աղոթքով՝ մենք պետք է նաեւ մեր զղջումը բերենք՝ գիտակցելով մեր մեղքերը, խնդրենք, որ Աստված դրանք քավի, եւ նոր միայն մեր աղոթքը շարունակենք: Որովհետեւ առանց մեր մեղքերի գիտակցության, առանց ճշմարիտ զղջման եւ Տիրոջ առաջ մաքրված կանգնելու փափագի՝ մեր աղոթքները չեն լսվի: Այդ է պատճառը, որ հայրերը հորդորում են աղոթական երանական վիճակը վայելելու համար մշտական զղջումով եւ մեղքերի խոստովանությամբ մաքրվել չարի կապանքներից:

*Շարունակությունը՝ էջ 7*

# ԱՆԱՊԱԿ ԲԱԺԱԿԻ

## ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԱՆԴԱՍՏԱՆՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 5*

Այդպիսի աղանդավորական հոսանքներից են եղել եբիոնականները, մանիքեականները, մարկիոնականները և էնկրատիտները, այս մասին տե՛ս Սրբազան Պատարագամատոյցք Հայոց, էջ19-21, **Աբէլ քահանայ Օղլուգեան**, նշվ. աշխ., էջ 86, Encyclopedia of early Christianity, New York, London, 1998, p. 1179, Ancient Christian writers, The letters of St. Cyprian of Carthage, p. 288-289, էնկրատիզմի և էբիոնիտների մասին տե՛ս **Եզնիկ ծ. վարդապետ Պետրոսյան**, Հայրաբանություն, Ա մաս (Բ-Գ դդ.), Ս. Էջմիածին, 1996, էջ 235-236), այլ այն հերձվածողներին, ովքեր Տիրոջ մարմնի եւ արյան խորհուրդը միայն ջրով են կատարում՝ առանց գինու: Հետաքրքիր է, որ Պոլսո Պատրիարքի սույն արտահայտությունը մեր Եկեղեցու տեսանկյունից մեկնաբանող ս. Ներսես Հայրապետն ու Մովսես Երզնկացին տեղյակ չեն ահեղ խորհուրդը միայն ջրով պատարագողների մասին: *«Եւ մեր զանուն նոցա ո՛չ երբէք լուաք, եւ ո՛չ ի գիրս զանիմաստիցն զայն հերձուած ընթերցաք»*,- գրում է ս. Ներսեսն իր թղթերից մեկում («ԹԸ», էջ 181): Ավելին՝ սուրբ Հայրապետի համար եթե անգամ հասկանալի է ջրախառն գինով պատարագելը, ապա միայն ջրով պատարագելը՝ ընդհանրապես անըմբռնելի. *«Զի որք ջրախառն գինեաւ առնեն, թերեւս ունին ինչ պատճառս, իսկ որք լոկ ջրով առանց խառնման գինւոյ յո՞յր արդեօք անուն կատարեն զայն. ի Քրիստոսի՞ն, ո՛չ երբէք, զի նա գինի առ ի ձեռս ըստ աւետարանչացն»* (նույն տեղում, 181-182): Նույն խնդրի մասին Մովսես Երզնկացին ասում է. *«Զի թէ եղեալ էր այս երբէք ուրեք միայն ջրով ումեք պատարագեալ, սուրբքն ծանուցեալ էին, եւ ի բազմաց լսելիս հասեալ էր մինչեւ ցայժմ, այլ զի ոչ էր՝ ոչ եղեւ յայտնի»* (Աբէլ քահանայ Օղլուգեան, նշվ. աշխ., էջ 114, այս մասին տե՛ս նաեւ նույն տեղում, էջ 86-90): Սակայն ի տարբերություն Մովսես Երզնկացու՝ վերջինիս ժամանակակից Բարսեղ Մաշկեւորցին (ԺԳ-ԺԴ դդ.) Մարկոսի Ավետարանի իր մեկնության մեջ գրում է. *«Դարձեալ՝ թէ վասն է՞ր էարբ գինի զկնի յարութեանն, զի խցցէ զբանս չար հերձուածողացն՝ զմանիքեցւոցն եւ զմարկիովնոսացն եւ զայնպիսի պատարագօղսն, որք ջրով միայն կատարեն զխորհուրդն, եւ կամ գինի եւ ջուր խառնեալ, զի ի բերոյ որթոյ ասաց, եւ որթն գինի ծնանի եւ ոչ ջուր »* (Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի, արարեալ երանելւոյն Բարսղի շնորհալի Վարդապետի Ճնճ կոչեցելոյ՝ ըստ մակղրական անուանն լուսաւոր մտօք եւ իմաստալի յորդորակօք, հատոր երկրորդ, Կոստանդինուպոլիս, 1826, էջ 282):



Վերջինս, անշուշտ, տեղյակ է «ջրամատուցողների» խնդրին, սակայն նա նաեւ հավելում է, որ Քրիստոս Իր հրաշափառ հարությունից հետո գինի ըմպեց, որպեսզի փակի նրանց բերանները, ովքեր կա՛մ միայն ջրով էին պատարագում, կա՛մ էլ ջրախառն գինով: Եթե Բարսեղ Մաշկեւորցու՝ Մարկոսի Ավետարանի մեկնության մեջ արտահայտած միտքը համեմատենք եւ զուգահեռ անցկացնենք Ոսկեբերանի խոսքի հետ, ապա, այո՛, բացառված չէ, որ սուրբ հայրն իր խոսքն ուղղել է միայն ջրով պատարագողների դեմ, սակայն նաեւ չի բացառում, որ այստեղ Ոսկեբերանը քննադատում է հենց ջրախառն պատարագողներին, ինչպես որ ընկալել են մեր Եկեղեցու ջերմեռանդ պաշտպանները: Տեր Աբելյանն իր ուսումնասիրության մեջ անդրադարձել է Ոսկեբերանի սույն արտահայտությանը, քննության ենթարկելով այն՝ գրում է. *«Երբ տուեալ հատուածը ճառի բովանդակային կառոյցից դուրս պոկուի եւ, իբրեւ այդպիսին, առանձին դիտուի, իրաւացի են հայադաւանները, բայց բովանդակային կառոյցի հետեւողականութեան մէջ՝ յունադաւանները»*: (Տ. Աբել, նշվ. աշխ., էջ 86):

*Շարունակելի*

***Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆ***

**ՇԵՆՈՒԴԱ Գ**

# ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՍ Բ

## ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

*Սկիզբը՝ էջ 5*

*7. Նա գոյություն ունի հավիտենապես:*

Միքիա մարգարեի մարգարեությունը շատ որոշակի է նշում Քրիստոսի՝ ժամանակներից առաջ գոյության մասին: Նա ասում է. «Եվ Դո՛ւ, Բեթղեհե՛մ, տո՛ւն Եփրաթայի, Հուդայի հազարավորների մեջ սակավավոր ես, քեզանից Ինձ համար Իսրայելի մի իշխան դուրս կգա, ում ելքը վաղուց է՝ հավիտենությունից (ըստ գրաբ. թարգմանության՝ «...ում ելքը աշխարհի օրերի սկզբից է») (Միք. Ե 2): Այստեղ Տեր Հիսուս Քրիստոսը ներկայացվում է իբրեւ հավիտենական մեկը, այն դեպքում, որ հավիտենությունը միայն Աստծո հատկանիշներից է: Ուրեմն ո՞րն է «ում ելքը վաղուց է՝ հավիտենությունից» խոսքի իմաստը: Իմաստն այն է, որ՝

*8. Նա Հորից ելել է հավիտյաններից առաջ:*

Այսինքն՝ Հորից ծնվե՛լ է հավիտյաններից առաջ: Ս. Երրորդության մեջ Նա Որդին է եւ Խոսքը (Բանը), իսկ Խոսքը հավիտյան Աստծո մեջ է: Նա Աստծո Իմաստությունն է, իսկ Աստծո Իմաստությունը հավիտյան Նրա մեջ է: Ուրեմն եթե հավիտենականությունը միայն Աստծո հատկանիշներից է, իսկ Տեր Հիսուս Քրիստոսը հավիտենական է եւ անժամանակ, ապա Նա Աստված է:

*9. Նա հավիտենական է՝ մինչեւ ժամանակների վախճանը:*

Այս հատկանիշը պարզորոշ ցույց է տրվում առաքյալի հետեւյալ խոսքում. «Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր եւ հավիտյան» (Եբր. ԺԳ 8), ինչպես նաեւ հենց Տիրոջ խոսքում. «Ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերին, մինչեւ աշխարհի (հունարեն «էոն» բառը, որ այստեղ թարգմանվել է հայերեն «աշխարհ» բառով, ավելի համապատասխանում է հայերեն «հավիտյան» բառին, որ նշանակում է թե՛ աշխարհ, թե՛ մանավանդ՝ երկար կամ անվախճան ժամանակ, դարաշրջան, կյանք) վախճանը» (Մատթ. ԻԸ 20): Դանիել մարգարեն այս հավիտենականության մասին ասում է. «Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որ չի անցնում, եւ Նրա թագավորությունը չի կործանվելու» (Դան. Է 14):

### ԳԼՈՒԽ Ժ

### ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՆ ԱՄԵՆՈՒՐԵՔ Է

<ins>Միայն Աստված է ամենուրեք</ins>

1. Ամենուրեքությունը միայն Աստծո հատկանիշներից է: Ուստի Դավիթ մարգարեն, սա գիտենալով, ասում է Նրան. «Ո՞ւր գնամ Քո Հոգուց կամ Քո ներկայությունից ես ո՞ւր փախչեմ: Եթե ելնեմ երկինք, Դու այնտեղ ես, թե իջնեմ գերեզման, այնտեղ էլ ես մոտ: Թե առավոտյան թեւերս առնեմ եւ ծովի եզերքում բնակվեմ, այնտեղ նույնպես Քո ձեռքը կառաջնորդի ինձ, եւ Քո աջը կընդունի ինձ» (Սաղմ. ՃԼԸ 7-10):



2. Այն էակը, որ ներկա է ամենուր, անկասկած անսահման է, իսկ անսահման է միայն Աստված: Ուստի այս հատկանիշը պատկանում է միայն Նրան. Աստված միաժամանակ ե՛ւ երկնքում է, ե՛ւ երկրում, որովհետեւ երկինքն Աստծո աթոռն է, իսկ երկիրը՝ Նրա պատվանդանը (Ես. ԿԶ 1, Մատթ. Ե 34-35): Եվ Աստծո ներկայությունը պաշտամունքային վայրերում միայն մի տեսակն է Նրա ամենուրեքության: Այսպես Սողոմոն Իմաստունը Տաճարն օծելիս դիմում է Աստծուն՝ ասելով. «Երկինքն ու երկինքների երկինքը բավական չեն Քեզ, ուրեմն որքա՛ն առավել այս տունը, որ շինեցի» (Գ Թագ. Ը 27):

3. Որեւէ այլ էակ չի կարող ներկա լինել ամենուրեք, այլապես սա կնշանակի, որ նա անսահման է, մինչ անսահմանությունը միայն Աստծո հատկանիշներից է: Ուստի եթե մենք ապացուցենք, որ Տեր Հիսուսն ամենուրեք է, սա կլինի Նրա աստվածության եւս մեկ ապացույց:

<ins>Տեր Հիսուս Քրիստոսն ամենուրեք է</ins>

1. Նա Իրեն հավատացողներին տալիս է մի խոստում, որն Աստծուց բացի ուրիշ ոչ ոք չի կարող տալ: Նա նրանց ասում է. «Որտեղ երկու կամ երեք հոգի հավաքվել են Իմ անունով, Ես այնտեղ եմ՝ նրանց մեջ» (Մատթ. ԺԸ 20): Սա նշանակում է, որ Տեր Հիսուսը ներկա է ամբողջ երկրում, որովհետեւ Եկեղեցին տարածվել ու հասել է երկրի ամենահեռավոր մասերն իսկ: Դու կարող ես պատկերացնել, որ ամբողջ աշխարհում քրիստոնյաները կիրակի օրը հավաքվել են իրենց եկեղեցիներում, եւ Տեր Հիսուսը նրանց մեջ է բոլոր այն վայրերում, ուր հավաքվել են: Սա չի՞ նշանակում, որ Նա երկրի վրա ամենուրեք է:

2. Մինչ Նա երկրի վրա ամենուրեք է, միաժամանակ նաեւ երկնքում է. որովհետեւ Նա բարձրացավ երկինք, ինչը տեսան առաքյալները (Գործք Ա 9), եւ Իր Հոր աջ կողմում է, ինչպես ս. Ստեփանոսը տեսավ (Գործք Է 56):

3. Միաժամանակ Նա նաեւ դրախտում («դրախտ» բառի տակ այստեղ պետք է հասկանալ այն, ինչ Հայ Եկեղեցու հայրերը կոչում են «արդարների օթեւաններ» կամ «կայաններ» եւ ոչ թե այն վերջնական դրախտարքայությունը, որին պիտի արժանանան արդարները Տիրոջ երկրորդ գալուստից եւ Մեծ դատաստանից հետո) է՝ այս աշխարհից հեռացածների հետ: Սա հայտնի է աջակողմյան ավազակին (թեեւ Ավետարանում չի նշված, թե հավատացող ավազակը Տիրոջ որ կողմում էր խաչված, սակայն ըստ Եկեղեցու Ավանդության՝ ավազակը գտնվել է Տիրոջ աջ կողմում, որից էլ առաջացել է «աջակողմյան ավազակ» արտահայտությունը) Տիրոջ ասած խոսքից, երբ խաչի վրա էին. «Այսօր Ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկ. ԻԳ 43):

Մի ուրիշ ապացույց կա նաեւ Պողոս առաքյալի հետեւյալ խոսքում. «Ցանկանում եմ ելնել եւ Քրիստոսի հետ լինելն առավել լավ եմ համարում» (Փիլ. Ա 23): Սա ցույց է տալիս, որ աշխարհից հեռացածները Տեր Հիսուսի հետ երկնքում են, եւ Նա էլ՝ երկրի վրա պայքար մղող հավատացյալների հետ:

4. Ըստ Եկեղեցուն Տիրոջ տված խոստման՝ Նա երկնքում է, երկրի վրա եւ դրախտում, ուր արդարները սպասում են, քանզի Նա ասում է. «Եվ ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերին, մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 20):

5. Նույն իրողությունը Տերը ներկայացնում է Նիկոդեմոսին ուղղած Իր խոսքում. «Ոչ ոք երկինք չի բարձրացել, բացի Նրանից, ով իջավ երկնքից՝ Մարդու Որդուց, ով երկնքում է» (Հովհ. Գ 13): Սա նշանակում է, որ Նա նաեւ երկնքում էր այն նույն ժամանակ, երբ խոսում էր Նիկոդեմոսի հետ:

6. Տերը ոչ միայն երկրի վրա այնտեղ է, ուր երկու կամ երեք հոգի հավաքված են Նրա անունով, այլեւ Նրան սիրող յուրաքանչյուր հավատացյալի սրտում, ինչպես ասաց. «Ով սիրում է Ինձ, Իմ խոսքը կպահի, եւ Իմ Հայրը կսիրի նրան. եւ նրա մոտ կգանք ու կօթեւանենք նրա մոտ» (Հովհ. ԺԴ 23): Սա նշանակում է, որ Աստծուն սիրող անձը օթեւան է Տեր Հիսուսի համար: Տերը մտնում է նրա սրտի մեջ, բնակվում նրա հետ, ուր էլ նա գնա կամ հաստատվի: Այդ պատճառով էլ ս. Պողոս առաքյալն ասում է. «Կենդանի եմ այսուհետեւ ո՛չ ես, այլ Քրիստոսն է կենդանի իմ մեջ» (Գաղ. Բ 20):

7. Տեր Հիսուսը ոչ միայն արդարների եւ սրբերի մեջ է, այլեւ ներկա է այն վայրերում, ուր չարերը մոլորվեցին, եւ փնտրում է նրանց, այցելում ու թակում նրանց սրտի դռները: Ուստի ասում է. «Ահա դռան առաջ կանգնած՝ բախում եմ. եթե մեկը ձայնս լսի եւ դուռը բացի, կմտնեմ նրա մոտ եւ նրա հետ կընթրեմ, նա էլ՝ Ինձ հետ» (Հայտ. Գ 20):

<ins>Եզրակացություն</ins>

Վերոնշյալ բոլոր փաստերն ապացուցում են, որ Տեր Հիսուս Քրիստոսն անսահման է եւ ամենուրեք՝ երկնքում, դրախտում եւ միաժամանակ երկրի վրա՝ պաշտամունքային վայրերում, հավատացյալների հավաքներում եւ Իրեն սիրողների սրտերում: Նա թակում է կորսվածների ու Իր պատվիրաններից խոտորվածների սրտերի դռները: Նա շարժվում է ամենքի հետ, ուր էլ գնան կամ բնակվեն: Նա ողջերի, ինչպես նաեւ ննջեցյալների հետ է:

<ins>Եվ այս ամենը հատուկ է միայն մեկին՝ Աստծուն:</ins>

*Շարունակելի*

*Թարգմ.՝ Ս Ստամբուլցյանի*

---

*ԽԱՉԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԸ*

# ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ

## Աղոթական հաստատություն

Մեզ առաջնորդում է Սեւանի Վազգենյան դպրանոցի փոխտեսուչ

**Տ. Մինաս քհն. Մարտիրոսյանը՝**

ուղեկցությամբ Հայկ Կարապետյանի

*Սկիզբը՝ էջ 6*

**- Եկեղեցու հայրերը մշտապես կոչ են արել նաեւ միմյանց համար աղոթել...**

- Միմյանց համար աղոթելը եւս քրիստոնյաների ճշմարիտ միության էական հանգրվաններից է եւ, իհարկե, շատ կարեւոր: Պողոս առաքյալը խնդրում էր եղբայրներին աղոթել, որ Աստված «խոսքի դուռը» բացի իր առջեւ: Խոսրով Անձեւացին ասում է. «Եթե Պողոսն աշակերտների աղոթքների կարիքն ուներ, որչափ առավել եւս մենք կարիք ունենք միմյանց համար աղոթելու»:

Սակայն միայն երկրի վրա ապրողներիս համար չէ, որ պիտի աղոթենք: Մենք մշտական աղոթական հաղորդակցության մեջ ենք նաեւ Յաղթանակած Եկեղեցու եւ Անդրանկաց ժողովի հետ, որ են ի Քրիստոս ննջած սրբերը, որոնք իրենց հերթին երկնքում բարեխոս են մեզ համար:

**- Երբեմն անգիտությամբ մեզ համար վնասակար բաներ ենք խնդրում Աստծուց եւ երբեք չենք ստանում, ուստի ըմբոստանում ենք Տիրոջ դեմ: Ինչպե՞ս հասկանանք մեր խնդրածի օգուտը կամ վնասը հենց մեզ համար:**

- Տիրոջ կամքի համաձայն լինելու առաջին հայտանիշն այն է, որ Աստվածաշունչը՝ Աստծու խոսքը հաստատի դրա ճիշտ լինելը: Սակայն եթե խնդրում ենք, բայց վստահ չենք՝ Տիրոջ կամքով է թե ոչ, անպայման աղոթքի վերջում պետք է ասենք. «Թող Քո կամքը լինի»: Եվ եթե պատասխանն ուշանում է կամ ժխտական է, պիտի հասկանանք, որ կա՛մ մեր խնդրածը Տիրոջ կամքի համաձայն չէ, կա՛մ պահն է անպատեհ, եւ կա՛մ մենք ինքներս անելիք ունենք: Բոլոր պարագաներում Աստված ավելի լավ գիտի, թե ինչ եւ երբ է մեզ անհրաժեշտ, ինչպես ծնողը, որն ավելի լավ գիտի իր փոքրիկ երեխայի կարիքները եւ ըստ այդմ՝ տալիս, մերժում կամ ուշացնում է երեխայի խնդրածը: Եվ եթե երկրավոր ծնողները երբեմն կարող են նաեւ սխալվել, ապա երկնավոր հայրը չի սխալվում երբեք եւ ամեն բան, որ միայն բարին է, տալիս է իր ժամանակին: Միայն թե պետք է համբերատար լինենք, երբեք չհուսահատվենք եւ հարատեւ աղոթքներով սպասենք, մինչեւ մեր Տերը մեզ տա: Աղոթքի այսպիսի հարատեւության մասին է մեզ հիշեցնում Դատավորի կիրակին:



Սակայն, անշուշտ, հեշտ չէ աղոթական կատարյալ վիճակին հասնելու ճանապարհը. այն չի տրվում միանգամից: Աղոթքի որոշակի աստիճաններ կան, որոնց միջով անցնելով միայն հավատացյալը կարող է հասնել կատարյալ, մաքուր, երկնքի դռները բացող աղոթքին: Բայց տրտմելու կամ հուսահատվելու առիթ չկա, քանի որ «Ով որ փնտրի, գտնում է, եւ ով որ բախի, նրա առաջ կբացվի» (Մատթ. Է 8):

# ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

## Ուխտագնացություն սբ. հայրապետի շիրմին

Փետրվարի 20-ին՝ սբ. Հովհան Իմաստասեր Օձնեցի հայրապետի հիշատակի օրը, նրա շիրիմից օրհնություն եւ բժշկություն ստանալու համար Ալավերդու տարածաշրջանի Արդվի գյուղ էին ժամանել ուխտավորներ թեմի տարբեր անկյուններից:



Արդվի գյուղի հյուսիսային մասում՝ լեռան ստորոտին, կանգուն է 8-րդ դարի ճգնատեղին, ուր ամփոփված է սուրբն իր ննջումից հետո: Ճգնատեղին, սուրբի աշակերտների միջոցով պահպանվելով իբրեւ վանք, այժմ կոչվում է Սբ. Հովհաննես:

Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, նախանձախնդիր հայրերի ժառանգության պահպանմանը, թեմի հոգեւորականներին եւ ուխտավորներին առաջնորդեց դեպի սրբավայր, ուր կատարվեց մասնավոր արարողություն: Որից հետո սրբազանը, այնուհետեւ Տ. Վահան քահանան հանգամանորեն քարոզեցին եւ հորդորեցին ուխտավորներին, որ շարունակեն հավատարիմ մնալ մեր նախնյաց ավանդույթներին եւ ազգային ու եկեղեցական սրբություններին: Ապա սրբազան հայրն իր հայրական օրհնությունը բաշխեց ներկաներին՝ հուսալով, որ նրանց խնդրանքները, որոնք մատուցվելու են Աստծո առաջ սբ. Օձնեցու բարեխոսությամբ, պտղաբեր կլինեն հայրենիքի եւ Սուրբ Եկեղեցու համար:

## Հանդիպում առաջնորդարանում

Փետրվարի 22-ին Գուգարաց թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ Վանաձորի հանրակրթական դպրոցների տնօրենների եւ Հայ Եկեղեցու պատմություն առարկայի ուսուցիչների հանդիպումը Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի եւ Լոռու մարզի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Մ. Սայադյանի հետ:

Քննարկվեցին լուծում պահանջող մի շարք խնդիրներ՝ կապված Հայ եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման մեթոդիկայի, ուսուցիչների պատրաստվածության, առարկայի մատուցման որակի, դպրոցում նրա դրվածքի, դիրքի եւ մոտեցման հարցերի շուրջ:

Թեմակալ առաջնորդը, մատնանշելով հանրապետության դպրոցներում ազգային արժեհամակարգի բացակայությունը եւ խիստ կարեւորելով առարկայի միջոցով հոգեւոր-ազգային գիտելիքների ձեռքբերումը, վերահաստատեց իր պատրաստակամությունը՝ սատար եւ օգտակար լինելու դպրոցին եւ ուսուցիչներին՝ առարկան նոր որակական բարձունքի հասցնելու գործում: Իր հերթին պրն. Սայադյանն էլ, խոսեց առարկայի կարեւորության ու այլ առարկաների շարքում իր արժանի տեղն ունենալու մասին:

Ապա հանձնարարականներ տրվեցին դպրոցների տնօրեններին ու ուսուցիչներին, որպեսզի դպրոցներում հսկողություն սահմանվի աղանդավորական գրականության տարածման դեմ: Մտահոգող խնդիրների շարքում ՔԴԿ տնօրեն Տ. Վահան քհն. Ազարյանն էլ ամփոփ ներկայացրեց այն հիմնական թերություններն ու բացթողումները, որ նկատվել էին մարզի հանրակրթական դպրոցներ նրա շրջայցի ժամանակ: Առաջարկվեց հաճախակի հանդիպումներ կազմակերպել Հայոց Եկեղեցու պատմության ուսուցիչների եւ հոգեւորականության հետ՝ առկա բացերը լրացնելու նպատակով:

▼▼▼

Օերս Սեպուհ սրբազանը, ուղեկցությամբ Սպիտակի հոգեւոր հովիվ Տ. Ավետիք աբղ. Սողոմոնյանի, տեսչական այցով այցելեց Սպիտակի տարածաշրջանի մի շարք գյուղերի հանրակրթական դպրոցներ, այդ թվում՝ Գեղասարի, Կաթնաջուրի, Մեծ Պառնու, Ծաղկաբերի, Շիրակամուտի, Ջրաշենի, Լեռնապատի, Լուսաղբյուրի, Սարալանջի, Հարթագյուղի, Խնկոյանի:



Պատկերն առավել քան մռայլ է Շիրակամուտ եւ Ջրաշեն գյուղերում, ուր դպրոցականները հայտնվել էին աղանդավորական կազմակերպությունների, հատկապես՝ ավետարանչականների եւ հոգեգալստականների ծուղակում: Սրբազանը վերոհիշյալ բոլոր դպրոցներում աշակերտների եւ ուսուցիչների հետ հանդիպման ժամանակ հանգամանորեն բացատրեց ազգային եկեղեցու կարեւորությունն ու դերը, նշանակությունն ու առաքելությունը հայ հոգեւոր եւ ազգային կյանքում, կարեւորեց դպրոցներում դասավանդվող Հայոց եկեղեցու պատմություն առարկայի դասավանդումը, նրա դերը ազգային քրիստոնեական կենցաղավարման դաստիարակության խնդրում, անդրադարձավ հայ գրերի գյուտի 1600-ամյա հոբելյանի եւ Մեծ եղեռնի զոհերի հիշատակության 90-ամյակի նշման կարեւորությանը եւ մեզ հուզող շատ հարցերի:

Ցավալի է, որ հոգեորսությունը անասելի չափերի է հասնում ինքն իրեն քույր եւ հարանվանություն հորջորջող ավետարանականների կողմից եւ ընդունում սանձարձակ ձեւեր: Պետք է մեկընդմիշտ գիտենալ, որ քրիստոնեական կրոնը Հայաստանում ներկայացնում է բացառապես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, եւ նա է, որ պատմականորեն հանդիսանում է հայ ժողովրդի հոգեւոր, մշակութային, հանրային, ազգային սրբությունների եւ ձեռքբերումների կրողը, ժառանգողը եւ փոխանցողը: Մնացյալները «գող են եւ ավազակ», քանի որ «փարախ են մտնում ոչ դռնից, այլ ուրիշ տեղից» եւ գառան մորթի հագած:

*Գուգարաց թեմի մամլո դիվան*

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

## ՆՈՐԱՇԵՆԸ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

Մարտի 3-ին Վրաստանի ազգային երիտասարդական խորհրդի եւ Թբիլիսիի «Նոր սերունդ» հայկական երիտասարդական կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպվեց խաղաղասիրական եւ ազգամիջյան բարեկամության յուրօրինակ ակցիա, որն անմիջականորեն կապվում էր վերջին ժամանակներս Թբիլիսիի Լեսելիձե փողոցի վրա գտնվող Նորաշեն եկեղեցու շուրջ ծավալվող իրադարձությունների հետ: Երթի նպատակն էր մեկ անգամ եւս փաստել, որ հայերն ու վրացիները, հատկապես երիտասարդներն իրարից տարանջատելու ոչ մի բան չունեն:

Հարյուրին հասնող խումբը, մոմավառություններով զուգորդվող իր երթը սկսեց Թբիլիսիի Սիոնի վրացական եկեղեցուց, ապա անցավ Նորաշեն, որից հետո՝ առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցի: Այստեղ նրանց դիմավորեց Վիրահայոց թեմի փոխառաջնորդ Տ. Աբգար աբեղա Հովակիմյանը, ով հույս հայտնեց հարցի շուտափույթ եւ բարենպաստ լուծման համար, օրվա հետ կապված աղոթք կարդաց եւ օրհնեց երիտասարդներին:

<u>**Պատմական ակնարկ:**</u> 15-րդ դարի կառույց Նորաշենում այսօր ո՛չ վրացական, ո՛չ էլ հայկական ժամերգություն ու պատարագ չեն մատուցվում: Այն փակված է: 1994-1995 թվականներին որոշ անձինք՝ Վրաց Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչներ, ներխուժեցին եկեղեցի եւ ոչնչացրեցին ու քանդեցին տեղի պատմական քանդակներն ու սրբապատկերները, վնասեցին աշխարհահռչակ գեղանկարիչ Հովնաթանյանի որմնանկարները, որոնցով զարդարված է ողջ եկեղեցին: Այն ժամանակ Վրաստանի հայերի միությունը դիմեց Վրաց Պատրիարք Իլիա 2-ին եւ Նորին Սրբություն Գարեգին Ա-ին, ում համատեղ ուժերով էլ վանդալիզմը կանխվեց: Բայց ժամանակի սոցիալ-տնտեսական եւ կոռումպացված ծանր իրավիճակը հարցի վերջնական լուծման հնարավորությունը չընձեռեց: Ուստի, որոշվեց հետաձգել քննարկումը՝ մինչեւ երկրում կայունության հաստատումը: Կայացավ բանավոր համաձայնություն, ըստ որի՝ եկեղեցին պիտի ժամանակավորապես փակվեր: Եվ սակայն վերջերս Նորաշենի պատի տակ՝ այստեղ արդեն դարեր շարունակ եղած հայկական խաչքարերի ու տապանաքարերի կողքին, հայտնվեցին վրաց մակագրություններով տապանաքարեր ու շիրմաքարեր, որոնք փաստելու էին եկեղեցու վրացական ծագումը:



Պարզվեց նաեւ, որ ինքնակամ այս քայլն արվել էր Նորաշենից 20-25 մետր հեռու գտնվող «Ծմինդա Ջվարի» («Սուրբ Խաչ») վրացական եկեղեցու սպասավոր հայր Տարիելի կողմից, ում նախաձեռնությամբ էլ եկեղեցու բակում ամեն օր մի խումբ վրացի հավատացյալներ սկսեցին մոմեր վառել՝ ի նշան Նորաշենի «վերադարձման»: Այս ամենին հաջորդեց վերջերս Վրաստանի «Ռուսթավի»-2 հեռուստաընկերության «Կուրիեր» լրատվական ծրագրով հնչած քահանայի անպատշաճ մեկնաբանությունը. «Թե ցանկանում են եկեղեցի ունենալ, ապա թող կառուցեն այն սեփական երկրում»:

Պետք է ասել, որ Նորաշենի խնդիրը մեծ արձագանք է ստացել եւ մինչ օրս լուսաբանվում է Վրաստանի լրատվամիջոցներով: Քննադատությունն ուղղված է վրացի քահանայի հասցեին՝ ասելով, որ նման հարցերն այդպես չեն լուծվում: Խնդիրը ենթակա է Հայոց Կաթողիկոսարանի եւ Վրաց Պատրիարքարանի ղեկավար մարմինների լուծմանն ու որոշմանը:

Ավելացնենք, որ Վիրահայոց առաջնորդարանին հուզող հարցերով ու նաեւ Նորաշենի առնչությամբ թեմի առաջնորդը դիմել է Վրաստանի նախագահ Միխեիլ Սահակաշվիլուն:

Նորաշենի հետ կապված հարցերի կարգավորման խնդրով երկրի նախագահին ու Վրաց Պատրիարքին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին են դիմել նաեւ Վրաստանի հայերի միությունը եւ համայնքային այլ կառույցներ:

*Վիրահայոց թեմի մամլո դիվան*





**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**հեռախոս՝**
**(0+31) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 16.3.2005 թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**